

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարբաջէք զիմում են ուղղակի
Тугиное. Редакция „Мусако“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առտան 10—2 ժամ
(Դայի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լէզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գարձեալ մի քայլ դէպի առաջ:—Ներքին տե-
սու թիւն: Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւն: Նամակ թիւրքացից:—Խառն լուրեր: Մշա-
կիւն: Հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղե-
կացոյց:—Բանասիրական: Չըտրի նկարագիր:

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԱՌԱՋ

Թիւրքացից և մասնաւորապէս
Հայաստանից թիֆլիսում ստաց-
ված մասնաւոր նամակները, մա-
սամբ էլ Կ. Պոլսի մեր մշտական
թղթակցի նամակը, նշանաւոր
նորութիւններ են հաղորդում մեզ:

Հաստատում են, որ Խրդու մի
մէջ մի մեծ խռովութիւն է պա-
տահել Հայ և թիւրք ամբողջ մի-
մեանց մէջ մի մեծ կռիւ են ու-
նեցել և թիւրքերը սաստիկ ջար-
դվել են հայերից, որոնք ոչ թէ
միայն քաղաքացիներից էին բաղ-
կացած, բայց քաղաքի հայերին
օգնում էին այդ կռիւի մէջ և Խր-
դումի շրջակայ գիւղերի հայ բը-
նակիները: Գրում են, որ Խրի-
մեան հայրիկը թողեց Կ. Պոլս
և ուղևորվեց դէպի Հայաստան,
ուր նրա յորդորանքով գաղթում
են Կ. Պոլսից բազմաթիւ հայ
համայնքներ: Խրանց հայրենիք գաղ-

թող համայնքները բոլորն էլ զինա-
ւորված են: Վերջապէս գրում են
որ Կ. Պոլսի Ներսէս պատրիարքը
յամառութեամբ պահանջում է որ
Հայաստանին տրվի նոյն ինքնա-
վարութիւնը, ինչ որ տրված է
Բուռնիային:

Այդ վերջին լուրը մասամբ
հաստատում է և Վիեննայի «Po-
lit. Corresp.» լրագիրը, ասելով
թէ եւրոպական մասնաժողովը որ
նշանակված է թիւրքացի մէջ
մոցնվելու վերանորոգութիւնների
իրադրոճման մասին հսկելու հա-
մար, որոշել է որ թիւրքացի բո-
լոր նահանգներում պէտք է մոցն-
վի Բուռնիայում իրադրոճված օր-
դանական կանոնադրութեան նը-
ման ինքնավարութիւնը:

Պարզ է, ուրեմն, որ և Հայաս-
տանում պէտք է իրադրոճվի սահ-
մանադրութիւնը Բուռնիայի ինք-
նավարութեան օրինակով:

Բուռնիան թէև անկախ իշ-
խանութիւն չէ ճանաչված, կա-
ռավարվում է մի գեներալ-նահան-
գապետի ձեռքով, բայց ունի իր
սահմանադրական իրաւունքները, իր
ընտրողական պաշտօնատարները,
իր միջցիա, ունի իր մինիստրու-
թիւնները, որոնք թէև մինիստ-
րութիւնների անունը չեն կրում,
այլ վարչութիւններ են անուան-
վում, կատարում են այնու ամե-

նայնիւ մինիստրութիւնների բոլոր
պաշտօնները:

Մի և նոյն ժամանակ եւրո-
պական լրագիրներից մինը նորե-
րումն հաղորդում էր որ Նիզիան
սկսեց այժմ մեծ յարգանքով վե-
րաբերվել դէպի Նուբար-փաշան,
սկսեց նրան մեծ նշանակութիւն
տալ: Այդ փաստը մեզ ասել էլ
համոզում է այն գուշակութեան
ճշմարիտ լինելու մէջ, որ Հայաս-
տանի ապագայ գեներալ-նահան-
գապետի պաշտօնի համար ամե-
նահաւանական կանդիդատը գու-
ցէ Նուբար-փաշան համարվի:

Առհասարակ, պէտք է խոստո-
վանվի, որ մի տարվայ ընթաց-
քում Նիզիայի հայեացքը Հա-
յաստանի վրա բաւական փոխվել
է: Մի տարի սրանից առաջ
Բերլինի կոնգրեսի ժամանակ,
Նիզիան էր որ եւրոպական բոլոր
պետութիւններից Հայաստանի
ինքնավարութեան գաղափարին ա-
մենաանհաշտ թշնամի էր հան-
դիսացել, իսկ այժմ, երևում է թէ
հետզհետե՛ աւիմայ ստիպված է
հաշտվել Հայաստանին Բուռնիայի
նման ինքնավարութիւն տալու
անհրաժեշտութեան հետ:

Եւ ճշմարիտ, ուրիշ ինչպէս պէտք
է հասկանայինք Սան-Ստեֆանոյի
դաշնագրի 16-րդ և Բերլինի 61-
որդ յօդուածները, որոնց մասին հո-

գացողը զիսաւորապէս Ոռուսա-
տանն է եղել, եթէ ոչ Հայաստանին,
չասնեք բուն քաղաքական, գոնէ
լայն վարչական ինքնավարութիւն
տալու մտքով:

Երևում է որ մի տարվայ ըն-
թացքում թէ Նիզիան և թէ
ամբողջ Եւրոպան սկսեցին համոզ-
վել որ եթէ թիւրքիւն դեռ այ-
սօր կատարելապէս քայքայված
չէ, որպէս պետութիւն, մօտիկ
ապագայում նա անպատճառ կը
քայքայվի, ուրեմն քաղաքական
խոհմեղութիւնը և հեռատեսու-
թիւնը պահանջում են այդ քայ-
քայվող քաղաքական մարմինը
կազմող առանձին մասերին պատ-
րաստել քաղաքական կենքրով
ապրելու, որպէս զի նրանք փոքր
առ փոքր վարժվելով քաղաքական
կենքրին, թիւրքացի վերջնական
անկումից յետոյ կարողանային ան-
հետացած պետութեան տեղը բըռ-
նել, նրա թէ եւրոպական և թէ
ասիական մասերում:

Իսկ Նիզիայում, այսինքն թիւր-
քացի ասիական մասում, ինչքան
էլ Նիզիան և ամբողջ Եւրոպան
ատէին հայերին, բոլորն էլ պէտք
է խոստովանվեն որ բացի հայերից
ոչ ոք չէ կարող թիւրքացի բա-
ղաքական մահից յետոյ անհետա-
ցած պետութեան տեղը բռնել:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԸԼՏՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Չլորի սահմանը (սահման) գտնվում է Ասիա-
կան Տաճկաստանի ծայրում, Ախալքալաքի հիւսի-
սա-արևմտյան կողմը նորանից մօտաւորապէս 47
վերստ հեռու: Ախալքալաքից ճանապարհորդը
գուրս գալով անցնում է Չիֆլի գիւղից, Չամ-
ուռաբի մօտից, Վաչխան, Սուլտայ և Կարալան
գիւղերից և հասնում է Տաճկաստանի սահմանա-
գիւղը, որտեղ հանդիպում է երեք վերստից ա-
ւելի տարածութեամբ խոզափին անուանված
մեռեալ լճակը, որը գտնվի է բոլորովին հնչաւոր
արարածներից և որի հոսման ընթացքը անցյալ
է: Այս լճակի արևմտյան ծայրում գտնվում է
տաճկաց սահմանի առաջին գիւղը Բեհամարպի:
այս գիւղումն էին տաճկաց սահմանապահները,
որոնք գրի բռնվեցան ռուսաց զօրքը Չլորի սահ-
մանը մտնելու ատեն զինելով Գեղիկից:

Բեհամարպի գիւղից ճանապարհորդը փոքր առ-
փոքր բարձրանում է Առանի սարերի վրա, այս

սարերի գլխից նորա առջև բացվում է ընտրեան
մի գեղեցիկ տեսարան. հիմալի է լինում տեսա-
րանը մանաւանդ գարնան և ամառվան եղանակնե-
րին: Արեւելան կողմից երևում են Ախալքալաքի
գաւառի ընդարձակածաւալ դաշտերը, հիւսիսա-
արևմտեան կողմից Չլորի սահմանի գեղեցիկ հո-
վաթ իր ծաղկալից մարգագետիններով, կանաչա-
զարդ խոտաւէտ բլուրներով և կարկաչաճառ առ-
վանքներով: Այս տեղից ահա, Առան անուա-
նուած սարաշղթաները իրանց բնական դօտրովը
բաժանում են և փակում Ախալքալաքի գաւառի
տեղը Չլորի սահմանից:

Այս սարի գլխից ճանապարհորդը սկսում է հա-
նապարհի վրայով յառաջ գնալով վայր իջնել
Չլորի հովիտի վրա, որտեղից երևում են փոքր
առ փոքր տաճկական գիւղերը:

Արեւմտյան ճանապարհով ուղիղ առաջ գնալով,
Բեհամարպի գիւղից յետոյ, հանդիպում է ճանա-
պարհորդին Զուռնուայ գիւղը, որը գտնվելով
Ախալքալաքից Արտանս դիտացող ճանապարհի
յարմարաւոր կենտրոնում կը ծառայէ որպէս ի-
ջևան ամենայն ճանապարհորդների համար, որը
անշուշտ տարվում են գիշերել այս գիւղում: Այս
տեղ է մնում գիշերելու Ախալքալաքից Արտա-
նան և այնտեղից Ախալքալաք չաբաթը երկու
անգամ երթևեկող փոստան ևս:

Զուռնուայ գիւղը Չլորի սահմանի մէջ ա-
նուանի է համարվում նորանով որ սահմանի գա-
մազամ (կառավարիչը), Նային բէկը, իր զերդա-
տանով այս գիւղումն է եղել բնակում: Նային
բէկը Ախալքալաքի եկեղեցապատկան գիւղերի

նախկին կառավարների որդին է, որը 1878 թ.
անցեալ ապրիլ 12-ին ռուսաց զօրքի Չլորի
մանկը լսելուն պէս իսկոյն իր զերդատանը փա-
խուցանում է դէպի Երզրում և ինքը հաւաքելով
Չլորի երեկի անձինքը իր մօտ, խորհուրդ է տա-
լիս նորանց հայրաքաղաք ամենին չը չարժէ տեղե-
րից, հանդիստ նստել իրանց տներում և սիրով
ընդունել ռուսաց զօրքին: Նա ասել է ընակիչնե-
րին, թե որպէս տէրութեան պաշտօնայ պարտա-
ւոր եմ գնալ և ահա գնում եմ, բայց ձեզ համար
աւելի լաւ է ռուսաց հպատակել, քան տաճկական
տէրութեան, որովհետեւ ես իմ փորձառութեամբ
համոզված եմ, որ մեր այս տաճկական տէրութիւնից
ոչ մի բարիք սպասել չէ կարելի և ոչ մի օգուտ
գուրս չի գալ ձեզ նորանից: Այս ասելով նա
մնաւ բարով է արել Չլորին և գնացել է Ղարս,
այնտեղից էլ Մուխթար փաշայի զօրաց հետ
պատերազմ գուրս գալով Ալաճատաղը սարափելի
կաւում սպանվում է ռուսաց զինուորներից:

Նային բէկի ընակարանում գետնելած էր
ռուսաց պատերազմական ժամանակաւոր վարչու-
թիւնը Չլորի յըմանի կառավարութիւն անունով
(Чалдырекское Окружное Управление):

Վարչութիւնը բաղկացած էր կառավարից, նո-
րա մի օգնականից, քարտուղարից, թարգմանից և
երկու գրագրից: Վարչութիւնը ունէր 15 ձիաւոր
ծառայողներ (Չափրիա անունով), բացի սորանից
կայանում էր այստեղ և տեղական ազգաբնա-
կութեան Մէճիլը (դատաստանական ժողովի
նիստը) որը բաղկանում էր հինգ անդամներից,
որոնց մէջ նախագահում էր Կալիկն—Չլորի հոգեւոր

առաջնորդը—սոքա ամենը տեղական բնակիչներից
էին, որոնք հաւաքվելով պ. կառավարի մօտ նորա
ներկայութեամբ վճռում էին իրանց հոգեւոր և
մարմնաւոր գործերը համաձայն իրանց խղճի և
օրինաց:

Չլորի սահմանը բաղկացած է 47 գիւղերից,
որք են Զուռնուայ, Փուռուտ, Վարդմանայ,
Սապատուռ, Դապատ, Կոռավել, Ձինգալ, Բագ-
րաշէն, Ուռթայ, Մերեթիս, Կեռաշէն, Տաշքեթլի, Զալայ,
Խրիշէ, Տաշպաշ, Կամարլան, Վերիճամ-
պաղ, Արիճամպաղ, Ղազլիբան, Արճաղայ,
Կակաշ, Պաշքեթ, Սուխարայ, Ղարաշալայ, Կա-
խաւ, Կոտամուխ, Թանթրաշ, Յխարոտավ, Կա-
մարպէլ, Չանուռայ, Չայիս, Չախիւթ, Քուրկա-
լայ, Կարդանաքի, Չամարոս, Վալիթ, Հիբուր,
Չօլէթ, Թաթալէթ, Կոտաս, Յօլտայ, Ռօտալին,
Պետրիս, Խամաշ, Գօշեան և Չալաւթայ, իսկ մի-
լէթ:

Այս գիւղերի մէջ ընդամենը կան 737 տուն
բնակիչներ, որոնք բոլորը մասնաւորապէս են,
արական և իգական սեռի ճիշդ որոշանութիւնը
դեռ յայտնի չէ, առ այժմ հաւում են 2688
արականներ միայն:

Չլորի կլիման խիստ թարմ, մաքուր, զով և
առողջարար է: Հողը արգաւանդ և պտղաբեր,
բայց բնակիչների անհոգութեանից տալիս է միայն
առատ ցորեան և քիչ կտաւատ, կարտօֆիլի գոր-
ծածութիւնը դեռ մտած չէ սրանց մէջ: Զուրը
համեղ, մաքուր և պարզ է: Ունի չառ տառն և
վճիտ աղբիւրներ, որը ռուսում են ամեն կողմից:
Բնակիչների մեծ մասը պարտաւոր են երկրագոր-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ պատմում են որ վրաստանի մի քանի վրացական հայ գիւղերում, վրացի ծնողները խնդրում են հայ ծնական դպրոցների վարչութիւններին ընդունել իրանց զաւակներին հայոց դպրոցները, այն պայմանով որ այդ դպրոցներում դաս տրվի և վրաց լեզու, որպէս առարկաներից մին: Բայց հայոց ծնական դպրոցները մերժում են ընդունել վրացի մանուկներին:

Հնորակալութեամբ ստացանք Ա. Բահաթրեանցի «Բերականութիւն աշխարհի լեզուի» չի՛վան Ա. պարզ, ընդարձակեալ և միաւորեալ նախադասութիւն: Գիրքը տպւած է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանի տպարանում, 1879 թւին:

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ այս օրերս սպասվում է ԹԻՖԼԻՍԻՄ Բարձրագոյն հաստատւած հարաւա-արեւելեան Ռուսաստանի յանձնաժողովի բաժինը, որ պէտք է հետախուզէ ֆոթի-թիֆլիսեան երկաթուղու գիծը և պէտք է ջնջի այն անպարտաւորութիւնները, որոնց ենթարկվում են այդ երկաթուղու վրա ճանապարհորդները և ապրանքներ ուղարկողները:

Այս րօպէիս հաւաքվել են ԹԻՖԼԻՍԻՄ ամբողջ փոխարքայութեան վրաց հոգեւորականութեան ներկայացուցիչները: «Тифл. Вѣстн.» լրագիրը լսել է որ այդ ժողովը գումարվել է սեմինարիայի վարչութեան համար երկու անդամներ և նոր հիմնովոր իգական վրաց դպրոցի կառավարիչ կլին ընտրելու համար: Ռուս լրագիրը շատ իրաւացի կերպով նկատում է որ այդ նպատակը շատ աննշան է այն պէտքերի հետ համեմատելով, որոնք զգացվում են, օրինակ, վրաց սեմինարիայի մէջ, և որոնց պէտք է դարձան անը վրաց հոգեւորականութիւնը: Հարկաւոր էր մտածել Թիֆլիսի վրաց հոգեւոր սեմինարիան վերանորոգել համեմատ վրաց եկեղեցու և վրաց ժողովրդի ժամանակակից պահանջման:

ԱՌԱՎԱՐԱՒԱՐԻՑ մեզ գրում են: «Բնչպէս լսում ենք Մոսկվայի հարուստ և յայտնի պարոն Յ. Ս. Անանեանը նուիրել է մեր եկեղեցուն մի զոյգ զանգակներ, բայց վաղուց է որ այդ զանգակները Թիֆլիսում են, թէ ում մօտն են գտնվում նրանք, և ինչ պատճառով մեզ չեն ուղարկվում,—մեզ յայտնի չէ: Մի և նոյն պ. Անանեան ինչպէս ա-

ծուկեամբ և մասամբ անանապահովութեամբ: Երկրագործ դասը (միջին) ծոյլ և դանդաղ են երկրագործութեան պարապմունքի մէջ, չը նայելով որ նրանց աշխատութիւնը քառապատիկ վարձատրվում է բնութիւնից, այնու ամենայնիւ: Նրանք իրանց հողերի քառապատիկ մասը անգամ հազու կեն վարում ու ցանում և այնպէս երկրի մեծ մասը կոյս է մնացած արօրից: Ստորին դասի մարդիկ աւելի ծոյլ են և սիրում են առանց աշխատութեան ապրելու և շատ հակամիտ են օտարի սեփականութիւնը իւրացնելու արհեստին ծառայելու: Իսկ բնակիչների հարուստ դասը, որոնք ձախապն են կոչվում, օգուտ քաղելով երկրի հարուստ բուսականութիւնից—խոտուէտ սարերից և մարգագետիններից պարապում են անանապահովութեամբ և նրա առեւտրով: Սրանք զարման սկիզբներին և աշխարհ դնալով հեռաւոր գաւառները՝ գնում են այն տեղերից մոխր գուրկ է փան անասուններ—կովեր, եղներ, հորթեր և ոչնախներ և բերելով այս տեղ խառնում են իրանց հօտերի և նախիրների մէջ և խոտում արօտաստեղծութիւնը արածացնելով պարապմունքում են նրանց: Երբ աշուրք մօտենում է ահագին քանակութեամբ տանում են դէպի Ախալքալաք, Ախալցխա, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս և այլ քաղաքներ և վաճառում են մասկաճաններին: Թիֆլիսի նահանգի թուղներ ևս գարնանը բերում են իրանց հօտերը մինչև այստեղ և սրանց սարերում վարձով արածացնում են իրանց ոչնախները:

Չորումը կայ արդիւնաբերութեան մի մեծ չափ հաճախ պահեստ, որից ամենևին չը գիտեն օգտվել

սոււմ են, խոտացել է նուիրել մեր քաղաքի չը բանջարի մի հազար բուրգ:

ԱՌԱՎԱՐԱՒԱՐԻՑ մեզ հաղորդում են հետեւեալը: «Մեր քաղաքին մօտակայ թուրքաբնակ գիւղերից մինում, այն է Ս. գիւղում, գիւղատիրոջ 10—12 տարեկան փոքրիկ աղջիկը վառարանի մօտ խաղալիս, նրա չորերը կրակից բռնվում են: Թէ և կրակը շուտ են հանգցնում, բայց երկաթի առողջանալու մասին համարեալ յոյս չը կայ:»

Ստացանք ԲԱԳՈՒՒՅՑ Աւագ Գրիգորեանցի հրատարակված «Ջարկեարի Գնարը» բանաստեղծութիւնների ժողովածուն: Գիրքը վաճառվում է Ջարկեարի որը օրիորդի օգտին: Իւրաքանչիւր օրինակի գինը, փոսի ծախսով արժէ 60 կօպէկ: Օտարաքաղաքացի ցանկացողները կարող են դիմել Բագու, հրատարակչին, հետեւեալ հասցեով. АВАКУ Лазаревичу Григорьеву въ Баку.—Գիրքը տպւած է ներկայ 1879 թւին Բագուի «Հայոց Մարդասիրական ընկերութեան» տպարանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս 23 սեպտեմբերի

Te Deum laudamus. հասունանք սրբապղծեալ եկեղեցիներն կը խեն իրենց հալածակորդաց ձեռքէն և կօրծնեն ու կը մարերն զանոնք, սակայն կարող չեղան գրաւել Ոսկեբերան և Լուսաւորիչ եկեղեցիներն զորս հալածասունները (կամ լաւ ևս ազատական կաթիլներն) ամուր կերպով կը պաշտպանեն: Հասունեան կըրն անդադար գովարանական երգերով Սուլթանի անգին կենաց համար կաղօթէ, և ո՞վ ասաց թէ կաթիլի եկեղեցին աննեղող է:

Հալածասունները բոլորովին յուսահատած չեն ապագայէն և կը կարծեն թէ քաղաքականութիւնը օր մը իրենց դատին նպաստաւոր լինի, թէպէտ և այժմ անդադանալականութեան փառաւոր օրերն են. ուստի առ այժմ գոհ կը լինին լոկ վարչական ժողով մը ունենալով և կառավարութեան դիմելով կը խնդրեն որ իրենց յատուկ կնիք մը շնորհէ վերջովի հայոց վարչական ժողով անուամբ թէպէտ կառավարութիւնը հաճութիւն կուտայ, սակայն Հասունի բողոքանաց վրա կը ծանուցանէ հալածասունեանց թէ հայ կաթիլի անունն չեն կրնար պաշտօնապէս կրել, պէտք է անուն մը գտնեն. հիմա այդ անուն փնտռելու վրա են. ցաւալի է վիճակներն, ոչ զուրկ ունեն, և ոչ անուն. տաղանդ

բնակիչները, այս Չլտրի ձկնառատ ահաղին լինէն է, որը տալիս է անչափ առատութիւնով զանազան տեսակ ձկներ՝ կապույտ, կարմրախայտ, մուրձայ և այլ տեսակ ահաղին և մեծամեծ ձկներ, որոնք տարիներով ձկնորսի երես չը տեսնելով անչափ շատացել են, իսկ բնակիչները նրանց երեսը անգամ չեն ուզում տեսնել:

Առհասարակ տաճիկները չեն սիրում ձկնորսին, անտեղեկ և անհոգ են ձկնորսութեանը և մինչև անգամ մեղք են համարում ձուկ որսալը: Այդ մասին նրանց առածը ասում է, աշխարհքում որսորդը, մասնաւոր ձկնորսը փրկութիւն չունեն:

Մի քանի գիւղերի բնակիչներ ևս գտնվելով խորը ձորերի մէջ, Արգահան ջրի եղբերում ունեն փոքրիկ այգիներ և պարապում են այգեպանութեամբ և պարտիզպանութեամբ:

Ամենայն գիւղ ունի իր սեփական մօլլան, որը բացի իր հողերը պաշտօնը կատարելը, տանում է և գիւղի հարկաւորեալ գրադրութեան պաշտօնը:

Ժողովուրդը բոլորովին գուրկ է ուսումնասիրութիւնին, չունի ամենևին ուսումնասիրաներ: Մի քանի գիւղի հարուստ դասի մի քանի մանուկներ միայն արժանանում են իրանց մօլլայից դաս առնել նահապետական ձևով ալիք, բան:

Չլտրիք ունեն մի յատկութիւն և կարծեմ այդ ընդհանուր է տաճիկներին, որ չը գիտեն մէկ մէկու մասնել, բամբասել, մէկ մէկու պակասութիւնը և գաղտնիքը գուրս ասել, այլ յարգում, պաշտպանվում և պատվում են մէկ մէկու, նրանք իրանց մշակի և հովիւ հետ խօսելիս անգամ նրան աղայ են կոչում:

ունեն և արդար պահանջումներ, բայց ինչ օգուտ, աշխուստի ափ մը ժողովուրդ կրնայ աւրաբար պատկերազմել. բայց վատիկանի քաղաքականութեան յաղթել զժողովուրդ է. մասնաւոր վատիկան իրեն արժանաւոր գործիքն գտած է իւր Պօլիս:

Հռովմայ կրօնական քաղաքականութիւնը մի գաղտնիք չէ սկսնործանացում. ամբողջ կաթիլիկութեան զօրութիւնը Պապի ապիերուն մէջ ամփոփել, բազմաթեւակ կաթիլի եկեղեցիներն միակերպութեան, մի ձեւ, մի գլուխ ունենալ առ այս կը նկատեն Հռովմայ բոլոր ջանքերն: Հասուն յարեւելս այս միութեան գործ գլուխ հանելու պաշտօն ստանձնած է. իւր պաշտօնը լաւ կերպով օգնութեան կը հասնի իւր փառաւորութեան իւր խիղճը հանգարտ է, զի եկեղեցւոյ ծառայ է և իւր պարտքը հաղանդելով կը կատարէ. կիսակտուր կաթիլիկութիւն չը կրնար լինել և ոչ իսկ աղատական կաթիլիկութիւն: Հասուն մեծապէս օգտակար եղաւ Հռովմայ. նա ունի սուր միտք մը խորագէտ և հեռատես, պետական անձ մը լինելու համար ստեղծուած է. գիտէ թէ ինչպէս իր նպատակին հասնելու է. խնդալ կամ զայրանալ իրեն համար անձանց չեն. զոհ պիտի լինէինք եթէ մեք աւագանը մկրտուած լինէր և Գուռ-Քաղաքի պատրիարքական աթոռն բազմէր. պիտի կրնան հակահասունեանք Հռովմայ յատակազօնի գործադրութիւնը արգելել: անհաւատալի է:

Իւր տարածուեցաւ թէ Հասուն առաջարկած լինի Ֆրնուրի վանահայր Նիկողոս եպիսկոպոսի որ եթէ կաթիլիկութիւնը ընդունի զինքն փառաւորապէս ի Չէյթիւն կը վերադարձնէ. եպիսկոպոսը փութաց հրապարակաւ հեղքել այս լուրը. բայց պարապ նեղութիւն յանձն առած է. ամենքս ալ գիտենք թէ Հասուն, որ լաւ կը ճանաչէ իւր ժամանակը, այսօր այսպիսի առաջարկութիւն մը անել մտքն իսկ չանցնէր:

Հռովմական հայոց վէճերու միջոցին մեք ալ մեր ինքնավարութեան խնդիրն աչքէ չեմք մըր պեր. Պատրիարքն շարունակ հետաճում է այդ ինքնավարութեան խնդրին: Մեր թերթերն ունեն հաղորդելիք թէ այս օրերս Պատրիարքը վերստին Գրնէն խնդրել է, Արեւելեան-Րումէլի կաղմակերպութիւնը Հայաստանի համար ևս: Բայց զժողով մեզ այս լրոյն հաւատալ, զի այն վայրկեան երբ Արեւելեան-Րումէլի կաղմակերպութիւնը այնքան մեծ փոփոխութիւն կը պատրաստէ օսմանեան կառավարութեան և Եւրօպայի իսկ բաւական մտատանջութիւն կուտայ, այդ պահուն ելլել այդ փոփոխութիւնը կաղմակերպութիւնը (թիւրքին համար փոփոխութիւն) Հայաստանի համար պահանջն իսկապէս թիւն չէ: Ներսէս եպիսկոպոս վերացեալ մարդ մը չէր իրի, չարիքն և փամփայտին յարմար պահանջմաներ անել գիտէ. շատ հաւանական է որ բարեկարգութեան համար կարեցնելներու ներկայացուցած ծրագրի գործադրութիւնը պահանջէ: Սակայն ներկայ վիճակին մէջ թիւրք կառավարութիւնը Հայաստանի ինքնավարութիւնը մը չհորհելու տրամադրի լինելուն և ոչ իսկ մէկ շաշնի ցոյց կուտայ. մի քանի պետական անձինք գիտեն թէ

Այս տաճիկ աղգարենակութիւնը շատ համակրութիւն և սէր է ցոյց տալի գէպի Ռուսաց տէրութիւնը:

Չլտրիք շատ գոհ են վերջին պատերազմից: Նրանք այնչափ ցորեան, զարի և խոտ ծախել են այս պատերազմի միջոցին զօրաց և կառավարութեանը վրա, որ ոչ մի տարի չէր պատահած նրանց այգիսի յաղաղութիւն:

Չլտրիք հիւրասեր և մարդաշահ են: Անձանթ մարդն անգամ երբ դիմեց մինի դուռը, իսկոյն առանց հարցութիւնի վազում են նրա ձիւն լկամ բռնում և նրան ներս են հրաւիրում: Նրանց առաջին պատիւը կը լինի նրան մի բաժակ սուրճ խմացնելը, մի քիչ յետոյ բերում են շուր լուսացվելու, որին հետեւում է և հացիկերովը:

Այստեղ հիւրին չեն հանդիպում ամենևին և չեն ծառայում հարսներ կամ աղջիկներ, ինչպէս հայոց գիւղերում գալիս են և ծառայում: Տաճիկ կանայք և աղջիկները ոչ միայն առաջ չեն գալիս, այլ տան մէջ դուռ նրանց ամենևին չէք տեսնում, նրանք որպէս ստուեր միայն պատերի մօտէ անհեղինակ և կամ ներքնատան դռները արանքից աննկատելի կերպով մօրկ են տալիս նրանցին:

Կանանց ազատութիւնը մասնատական միւլեւանդութիւնից բոլորովին բռնաբարված է: Նրանք ամեն ազատութիւնից զուրկ իրանց կանայքի օրերը անց են կացնում փակեալ դուռներն մէջ: Տաճիկ կինը որպէս մարդ իրաւունք չունի ոչ մի բանում իր կամքի աղատութիւնը գործ դնելու, նա ստուգում է, նա բնութիւնից պարզեալ իր սեփական աչքին անգամ չէ կարող ազատօրէն գործ դնել

այս ինքնօրինութիւնը այժմ կրնայ կառավարութեան օգտակար լինել, մասնաւոր դրամական տեսակետով, սակայն ապագային համար Հայաստան իրենց ձեռքէն ելած կը համարեն: Մեզ համար եթէ անհրաժեշտ պէտք մը կայ նիւթապէս և բարոյապէս Հայաստանը պատրաստել, որ գիտնայ և կարենայ պարագայներին օգուտ քաղել և չէ թէ աւուրչ ապուրչ նայի և լայ:

Հարստահարութեան քաւական լուրեր կուզան. սակայն ուր որ մերկներն քաջադատութիւն ունեցած են և յաթող ելած են: Լրագիրը հրատարակեցին թէ Հայաստանի մէջ գիւղի մէջ (անունն չեմ յիշեր այս պահուն) թիւրք մը հայ մը ձեռք, որովհետև բամազանի օրով հայը կը համարձակի թիւրքին պատատիւն տալ, հայք կը զայրանան, բոլոր թիւրքեր կը միանան և կը սկսեն ձեռք հանել, հայք ալ պարապ չեն մնար և փոխանակ աւանակաբար ձեռն ուտելու և յետոյ պատժուելու, ալ կը համարեն ձեռք և այնպէս պատժուել, ուստի իրենք ալ կը յարձակն թիւրքերու վրա, փառաւորապէս կը դանակոծեն զանոնք և ջրուցան կանեն. տեղական իշխանութիւն զինուորական զօրութիւն կը խրի, կը ձերբակալեն երկու կողմէն ալ, դատաստան կը լինի, հայեր կը վատտիկն (միշտ զօրավոր կը վատտիկ ի թիւրքի և ոչ, իրաւունքը): Թէ այս դէպքէն և թէ կարնոյ դէպքէն կը տեսնուի թէ երբ որ միւրկներն կը դիմանան և քաջութիւն ցոյց կուտան յաղթող կեցին. կը յիշէք անշուշտ թէ կարնի պարսիկ մը հայ աղջիկ մը լլկեց և այնքան արհեստագործիւն եղաւ, այժմ կը լսեմք թէ պարսիկներն 2000 լիւր վճարած են աղջկան իւր ապրուստ, թէպէտ դեռ շատ ստոյգ աղբիւրներն չը լսեցինք:

Բարեկարգութեան յանձնաժողովը, որոյ համար հաղորդած էին թէ ձամբայ ելեր է դէպի Վան կերի թէ միտքը փոխել է մտածելով թէ հոն երթայ ինչ պիտի անէ, ուստի հանգիստ կերպով նստեր են ի կարնի, կեր, արք և ուրախ լեր: Կը զրուցուի թէ Քոլի մի քանի պէյներն աքաբաւնաց դատաւարատեան են. Տիգրանակերտէն բաւական ժամանակ է մեզ լուրերը դադարեցան. ալ բարեկարգութիւններն լնցան. նայալ «Մշակ» թիւրթակցութեանց մէջ Ապէտին պէյի դէմ գրվեցաւ, և թէպէտ այն ատեն ըսողներ եղան ինձ թէ ամեն ինչ խնդրել կուզեմ, բայց յետոյ Պօլսոյ թերթերն ալ սկսան մտածել թէ Ապէտի պէյի այնքան գույնատ տալիս չապրութիւն է. «Թէքրիմիսի Էֆենդար» (հայերէն թերթին) կծու յօդուածներ հրատարակեց և Քրանսերէն «Stamboul» թերթը բաւական լաւ կերպով կը ջննդատէ Ապէտին գործերն և կը հարցնէ թէ «Երբ հարկաւոր գիւղեր այրող պէյեր որք անշուշտ բաւական մարդ ալ զարկած սպանած լինելու են պարագայէս ուրիշ երկրի մը կաքտորին, ուսկից վերադառնալ գոտար չէ, ապա ուրեմն մասունայ պատիւով որոք համար դրուած է: Սթ մ մպ ու լ կարծեալ այդ պէյերն կրակելու լնցնելու էին: Թիւրք մամուլը բռնկեցաւ, և կը հարցնէ զարմացմամբ թէ «Հայերն գոհացնելու համար միթէ հնար է քրիւրներն կրակել:» և այս թիւրք մամուլը յիմարական յօդուածներ կը հրատարակէ այս առթիւ. սոյն յօդուածներու մէջ կը

մտիկ տալ միջին: Վինը ոչինչ չէ, եթէ ոչ միայն այդ մարդու զգայական հաճոյքին անպայման ծառայ: Վին արմատը արդ-մարդ տեսնելուն պէս լեղապատառ, կաթակի զարնուածի պէս արագութեամբ փախչում և պահվում է նրանից, իսկ եթէ նա պատահելու լինի ձեզ մի այնպիսի տեղում և կամ մի այնպիսի անել ճանապարհի վրա, որ ձեռքից փախչելու հնարը չը լինի, իսկոյն ծածկում է իր երեսը գլխի աղուլով և թիւրմալը դէպի ձեզ դարձնելով կը կոչում է, նստում է գետնի վրա, մինչև դուք հեռանալը նրանից:

Չը նայելով տաճիկ կանանց այսպէս խոտիւ պահվելուն, պատմում են, որ նրա առանձին և յարմարաւոր ժամանակ գտնելիս վտառ են գալ օտոնեալ օտարականին և բաց դէմքով խօսել և ծանօթանալ նրա հետ, միայն թէ այդ ոչ ոք չը տեսնէր և ապաւով լնէին, որ իւրաքանչեք ոչ ոք չէր նկատում այդ: Աղջիկները իրանց սիրած տղայի հետ չեն կարող ամուսնանալ, այդ ընտրութիւնը և կամաց հաճութիւնը կախած է միայն նրանց ծնողաց կամքից, աղջիկները անպայման հնազանդելու են իրանց հօր կամքին և այդ պատճառաւ շատերը զոհ են լինում ծնողաց բռնակալ կամքին տահաճութեամբ ընկնելով այն մարդու գիրք կը, որին յալիտեան չեն կարող սիրել:

տեսնում
տաճին
հայերն
հետեւ
թերթեր
պիտի
Հայ
կը լինի
Չէյթի
Յիւթ
Տիւրք
Levanti
տիւրք
նաքար
Պ. Լ.
Կ. Պօլ
լէթ պա
Պ. Չեքա
տան զ
նեցած
տեղեկ
պատր
րաւ, Պա
պահան
մինչև
բու ոչ
հոլութիւն
գիրներ
կայ. և
տեղեկ
տրու
հարու
համար
Պ. Մ.
և իրեն
րուն հ
գիրն ա
տուհն
բարեկ
րուն ան
սած է
պ. Սա
խորհր
թեանց
մը չէ
պիտի
պլորի
րութեան
զօրքեր
որ բար
գիտէ
զատել
մեր պ
բական
թիւնը
Անգղ
յատան
արդար
էր Անգ
հաւատ
ուսաց
առաջի
թէ Անգ
մը չուն
Պ. Մ.
տրամա
նի բարե
ետ չառ
րած է,
կանայ
կը ստի
չը դրու
իսկ չեն
«Սալա
Հայաս
քաղաք
լաճ, լոկ
և բարե
համար
թիւնը
կայն ցա
հետ յար
ազատակ
կրնաք
կուսակց
մտելու
գործեր
ատեն
տոնէից
զգոյշ
սական
բուն նպ

տեմնուի թէ որչափ թշնամական զգացումներ կը տածեն մեզ նկատմամբ. թիւրքերն կը սնորհն թէ հայերն փոքրամասնութիւն են (իրենց խնկրով) հետեւաբար նոցա համար քիւրդերն չարչարելը արժանի է: Այս ասոր վրայ թէ մեր և թէ եւրոպական թերթերն ինչ որ պէտք է գրեցին, բայց որքա՛ն խօսք պիտի հասկնան:

Հալէպի կառավարիչ Ղալիպ բաշայ պաշտօնանկ կը լինի և Սիւտ բաշա որ քովսէրի պաշտօնով Ձէյթուն գնացեր էր նմա կը յաջորդէ. այսպէսով Թիւրք կը մնայ բարեկարգութեանց յանձնաժողովը: Ձէյթունի խնդիրն փոփոխութիւն մը չէ կրած ճիշտ լուր ստանալն շատ դժուար է. միայն Levant կը հաղորդէ թէ հանդարտութիւն կը տրիէ, թիւրք զինուորներն կը հսկին և աստիճանաբար բարեկարգութիւն պիտի լինի:

Պ. Լէյպտը այսօր կամ վաղը կը վերադառնայ Կ. Պոլիս. նորա բացակայութեան միջոցին Պ. Մէլէթ պաշտօն վարեց յատկապէս Անգղիայէն գալով: Պ. Չերազ գնաց Միլէթի հետ տեմնուի: Գետնաշառձան զինուոր պաշտօնականներէն ոմանց հետ ունեցած բարեկամութիւնս կը ներէ ինձ քիչ շատ տեղեկութիւն ստանալ երեւմէն դեպքերու և պատրիարքարանի մէջ եղած բանակցութեանց վերաբերեալ: Պատրիարքարանը վերջին աստիճան վարդապետ պահութիւն կուգէ պահել ամեն խնդրոց մէջ, և մինչև իսկ այ. Չերազի արդիւնած է խմբակներու ոչինչ հաղորդել: Պատրիարքարանի գաղտնապահութիւնը կը յարգուի, սակայն կան այնպիսի խնդիրներ յորս այդքան զգուշացող լինելու պէտք չը կայ. և շատ անգամ մէջ իսկ կը լսուի այնպիսի տեղեկութիւններ ազգային գործոց վրայ, որ կարեւորութիւն ունեն, բայց հրատարակել օգտակար չը համարելով կը լռեն:

Պ. Մէլէթ երկու ժամ տեսակցեր է Չերազի հետ և իրեն բացակայութեան միջոցին եղած դէպքերուն հետամուտ լինել ուզած է. Ձէյթունի խնդիրն առաջին տեղ գրաւել է, յուսադրական խոստումներ, նոյնպէս պատրիարքի հրաժարականը և բարեկարգութեանց համար խրկուած քովսէրներուն անօրուտ լինելը, այս առթիւ պ. Չերազ ասած է թէ զայն ազգը յաւաք սրտի տեղեկացաւ պ. Սալիպարի խօսքերուն որով կը յայտարարէր խորհրդարանի մէջ թէ Հայաստանի բարեկարգութեանց մէջ Անգղիա յատուկ պարտականութիւն մը չէ ստանձնած: Միլէթ, կասէ պ. Չերազ. այս պիտի յայտարարուի մը կարող էր ինքն Սալիպարի անկէ, վասն զի Սան-Սթէֆանոյ դաշնագրութեան 16-րդ յօդուածին համեմատ ուսումնական գործերն պիտի չը քաշուէին Հայաստանէն մինչև որ բարեկարգութիւններն ի գործ չը գնէին, և դիտէք որ թիւրքերն երկիրն Ռուսաց ձեռքէն ազատելու համար ամեն միջոց ի գործ պիտի դնէին մեր պահանջած բարեկարգութիւններն չուտով իրականացնելու: Միայն Սալիպարի քաղաքականութիւնը եղած որ այս յօդուածը չնշեց, և այսու Անգղիոյ կառավարութիւնը կերպաւորութիւնը Հայաստանի բարեկարգութիւններն փութացնել և մեր արդար պահանջներն գործնելու: Մեզ անհար էր Անգղիոյ ներկայացուցիչ խօսքերուն կատարելապէս չընձայել. 16-րդ յօդուածին ջնջուցաւ, ուստայ բանակն քաշուցաւ, Հայաստան մնաց առաջին փնտրելու մէջ և Սալիպարի կը յայտարարէ թէ Անգղիա ո և է մասնաւոր պարտականութիւն մը չունի այս մասով:

Պ. Մէլէթ կը պատասխանէ ձեր խօսքերն շատ տարամբանական են, սակայն Անգղիա Հայաստանի բարեկարգութեանց համար իւր խոստումներն ետ չառնէր. Սալիպարի այդ յայտարարութիւնը արժէ, սակայն գիտէք որ խորհրդարանական կեանքի մէջ տաք վիճաբանութեանց միջոցին հարկը կը ստիպէ որ պաշտօնեութիւնը այնպիսի խօսքեր չը գրուէ որք թիւրք իրեն ներքին համադմանցն իսկ չեն համապատասխաներ:

Այսպէս չէք տեսներ Սալիպարի գործերն, Հայաստանի մէջ հիւպատոսներ կը դնէ, այնպիսի քաղաքներ ուր ոչ անգղիացի կայ, ոչ անգղիական շահ, լոկ քրիստոնէից պաշտպանութեան համար է և բարեկարգութեանց գործադրութեան հսկելու համար: Գուր անհոգ եղէք, ներկայ պաշտօնեութիւնը պիտի կատարէ ինչ որ խոստացած է: Սալիպարի քաղաքականութիւնը պահանջարկներն հետ յարաբերութիւն հաստատելու, հակառակորդ և ազատական մասին հետ են ձեր յարաբերութիւններն, կրնաք ապահով լինել որ այն օրն երբ ազատական կուսակցութիւնը գործոց գլուխ անցնի, չը միջամտելու սկզբունքն պիտի ընդունի, և Արևելքի գործերէն բոլորովին ձեռնմխի պիտի լինի և այն ատեն Անգղիոյ կառավարութիւնը թիւրքաց և քրիստոնէից մէջ եղած յարաբերութեանց միջամտելէ զգուշ պիտի կենայ, դուք ալ դիտէք թէ ազատականաց այս քաղաքականութիւնը հայոց շահերուն նպաստաւոր չը կրնար լինի:

Ուրիշ երկար խօսակցութիւններէ վերջ պ. Մէլէթ կասէ թէ կուզէր զրան երկարօրէն խօսել Հայաստանի բարեկարգութեանց համար, բայց քանի մը օրէն Նիդրլանտ պիտի մեկնի, ուստի իւր խօսքերն մեծ կարեւորութիւն մը չունեն:

Պ. Չերազ կը մեկնի դեպքանատունէն, անշուշտ զեղեցիկ յայտնելով լեցուած, ինչպէս տարիէ մը ի վեր:

Ռուսմանիոյ ներկայացուցիչն ալ պատրիարքարանի այցելութիւն տուաւ, չնեղ գիտել ինչ էր պատճառը. բայց այս մասին ալ սաստիկ դադարեցաւ:

Բողոքականաց Աստուածաշունչի ընկերութեան նախագահը բողոքական հայոց ազգայնորդ ընկերակցութեանը այցելութիւն տուաւ սրբազան պատրիարքին, այցելեց մայր եկեղեցին, և երկարօրէն տեսնուեցաւ պատրիարքի հետ կրօնական խնդրոց վրայ:

Վերջապէս խրկուեցաւ Կ. Պոլսէն դէպի Վան. խրկուեցաւ այդքան ատեն Պոլիս թափառելու հանելուկ մ'էր, լուծումը սրբազանը միայն տարաւ. դատութեամբ կը հարցնէինք էր Հայաստանի հրէշ չափը (ինչպէս կը կոչուէր սրբազանը) Վոսիօրի ափուքները կը զեղեր, Հայաստանի տառապանաց միջոցին. երբ խրկուեցաւ պատրիարք էր կասէր ջորիս խափուտար պատրաստ է, երբ կուգէք կը հրաժարիմ կերթում: Արդարեւ ամենայն դիւրութեամբ, ինչպէս արժան է պարզ կրօնաւորի մը, սրբազանը աթոռէն իջաւ, բայց ջորին մտաբայաւ. անպիտան վարդապետներու համար չեմք մտածել, կուզեն Հայաստան երթան կուզեն հոս կենան, միշտ փնտաւար են, բայց հայրիկի համար այնպէս չէ. հայրենասէր և պերճաբոս, մեծ համարում և ազգեցութիւն ստացած ժողովրդեան մեծամասնութեան պաշտելն եղած, մեծ դեր կրնայ խաղալ Հայաստանի վերանորոգութեան մէջ. կրօնաւոր մ'է որ նեղ գաղափարներ չունի, եկեղեցական մ'է որ առաքելութիւն ունի, վարդապետ մ'է որ ուսման յարգը ճանաչել է Աւետարանի հետ հայոց պատմութիւնը քաղցել է կեղեցիկ ընկէն, բարոյականի հետ հայրենասիրութեան: Հայկական տղայի կատարեալ ներկայացուցիչն է. դրաւիչ է իւր դէմք (Պայտի կասէր խնդրէ մը մէջ թէ կուզէր պահ մը պատկերահան լինել սրբազանի դէմքը նկարելու համար) իւր խօսքերը սրտի խորը կը թափանցեն:

Կը ցաւիմ որ պատրիարքական աթոռէ իջնելէ ի վեր իւր ժամանակը պարապ անցուց, բայց յուսաւ որ աշխատութիւնը կրնայ պատկերով անցնելու պատկառ լրացնէ. հաւանքներ Վանայ առաջնորդ կրնարուի: Վասն ձեր նախ որ երբ վան երթալ մեծապէս նպաստէ Արարատեանի աշխատութիւններն դիւրացնելու. ինքն արդէն այդ ընկերութեան ջնքը բարեկամն էր և ամեն ատեն նորա յառաջդրութեան ժամանակ եղած է: Արարատեանի ստացած զօրութիւնը կը ներէ նմա ուժով աշխատել ի Տարսուս և ի Վասպուրական: Նախորդ նամակա հաղորդած եմ թէ Կ. Պոլսոյ հայք Արարատեանի աւելի զօրութիւն տալու համար գիշերահանդէսի մը պատրաստութիւն կը տեսնէ: Այդ հանդէսը սեպտեմբերի 16-ի տեղի պիտի ունենար, բայց օդը անձրևոտ լինելուն մնաց սեպտեմբեր 23-ին: Ընկերութիւնը առաջին նախարար Արաբիի բաշայի պաշտպանութիւնը խնդրեց, կարևոր պաշտպանը կային, մասնաւոր թէ նախարարաց և դեպքանաց հետ յարաբերութիւններն ակնառնելու կանեն ընկերութիւնը Հայաստանի մէջ, և իրեն հակառակորդներն, մասնաւոր թիւրք պաշտօնեաներն, իրենց սահմանէն դուրս ելլել չեն համարձակուի:

Լաւ ցանձաժողով մը կազմուած էր, Օտեան կը նախագահէր. Կ. Պոլսոյ դրամական վիճակի տխուր է. ներքինութիւնը ամեն տան մէջ է, բայց Արարատեան մեծացնելու համար հարկ էր գործողութիւն անել, թնայեալ և մի քանի ամիս առաջ մի մեծ պարահանդէս տրուած էր յօգուտ այս զնկերութեան: Բայց հոգ չէր, բացի Արարատեաններէն ոչ ոք կրնար համարձակել մի քանի ամսուան մէջ կրկնակի ժողովրդի դիմել: Տեսանք Օտեան, Փորթուզական (նախագահ մարտական բարձր, ժողովրդ), Համաձեռն (ընդհ. քարտուղար Արտաքին գործոց նախարարութեան և նախկին օսմ. դեսպան Խալաֆի), Գահպաշտ (նախագահ Առեւտրական բարձր, բազմա ատենի) որը անձամբ կը պարտէն նպաստ կը հաւաքէին, տեսնեք Վիպլէնկեան, Ներսէսեան և ուրիշ երեքի վաճառականները անձամբ Կ. Պոլսոյ հայոց տուններն պարտել յօգուտ Արարատեանի: Ազգային առաջին սեղանաւորներէն Խաչիկան գանձապետ էր. մի քանի շաբաթ իւր դրամատուրը կարծեմ Արարատեանի գրառներն կը գրած էր, խիտ անձնուէր կերպով աշխատեցաւ և իւր աշխատութիւններն մեծապէս արդիւնաւոր եղան, իրեն մեծապէս աջակից էր

Նորատունկեան Գարութիւն, որ աշխատութիւն չը լինայց, և ուրախութեամբ տեսնեք ազգին աւանդէն մեծ անուններէն մին կրող երիտասարդ, Պողոս Նուբարեան (որդի Նուբար բաշայի) համակրանք աշխատել այս գործոյն, արեւու և անձրևի տակ անձամբ կը հսկէր պարահանդէսի վայրին կարգադրութեանց և շատ ատեն իւր գործաւոր կաշխատէր: Ընկերութեան նախագահ Նորատունկեան Գարութիւն այն ինչ վերադարձած Սերբիայէն առանց որ մը իսկ հոգնութիւն առնելու պարահանդէսի յաջողութեան սկսաւ վստակել, ամեն ինչ անձամբ կը հսկէր. Արարատեանի գրասենեակներէն Խաչիկանի, անտի Բ. Գուռնէն Վոսիօր ամեն ինչ իւր աչքովն կը տեսնէր և կը կարգադրէր: Օտարականներն խիտ քիչ անգամ դաշտային պարահանդէս տուած են Կ. Պոլսոյ, իսկ զիշերահանդէս և պարահանդէս միայն չեմք յիշել, իսկ հայերն բնաւ այսպիսի հանդէս մը չէին տուած. ուստի ընկերութեան պարտքն էր այդ հանդէսը զեղեցիկ անելու համար ոչինչ խնայել. հարկ էր որ եւրոպացի հայկական ճաշակի վրա լաւ գաղափար ունենան. Պոլսոյ մէջ կարևոր է միշտ երբ ազգային գործ մը եւրոպացի քննադատութեան կը ներկայանայ, այն ձեռնարկութեանց այնպիսի կերպարանք մը տալու, որ յայտնէ վար չը մնամք, և հարկ է խոստովանել որ այս առթիւ մէջ նաև Արարատեանի ազգին պատիւ բերին: Յատուկ շողիւններ Մարմարայի կղզիներէն և Վոսիօրի ափուքներէն ընտրեալ բաղնիքներն մը ի Պոսթիլքերէ կը տանէին արևը մոտեցնել մի ժամ վերջ: Գիշեր էր, լուսին չը կար, երբ հասանք Նիքիթիոյ առաջ որ կէս ժամ հեռու է Պոսթիլքերէէ տեսնել լուսավառ երկրորդ մը որ Վոսիօրի վրա լոյս կը տարածէր, անհամբերութեամբ հաննելու կը սպասէինք. հասանք մտանք Մարմ (Միսէկ պէյի հիւանդի պարտէզը. լոյս վերը, լոյս վարը, լոյս դէմքերն լոյս ետնին, հիւղէն պարտէզի մը մէջ էինք): Հայոց աշխատականութեան և տաղանդի ընտրեալ մասն հոն էր. ինչ սիրուն կիներ, ինչ աւելորդ գրեթէ, անտառի մը մէջ վրաններէ արահ մը պատրաստուած է, զարդարած ազգի ազգի դրօշակներով. ամբողջ յանձնաժողովը աչքի վրայ էր. տեսարանը հիանալի էր. երաժշտութիւնը յափշտակիչ, լեցուն սեղան մը պատրաստ էր. պարերը կը սկսեն, երիտասարդը և տիկնայք կը սլանան. անմոռանալի ժամեր. Հոն են Արարատ փաշա, Պարոյց դեսպանն և դեսպանատանց գլխաւոր ներկայացուցիչը: Արարատ համ փաշա ի սեղանի կը հրաւրէ արտաքին գործոց պաշտօնակցի և Արիֆի փաշան յետոյ կը պատրաստուին զայ միասին Արարատեանի հանդիսին, բայց այն միջոցին Սուլթանէն լուր կուգայ և անմիջապէս ի պալատ կերթան:

Հանդիսականը 1000-էն աւելի էին որ կը պատկէին. մեր բարեկամներն ամբողջ հոն. Եւրոպայի մեծ թերթերու թղթակիցներն, ազգային խմբագիրը և պ. Արզամ հրաւիրեալ էին և հոն են. կէս գիշերէ յետոյ կը մեկնինք, հանդարտ ծով մը, զով օդ մը և պաշտառ լուսին մը շողեցաւ մէջ հրճուալի կանեն մեր ժամերն: Վերջապէս այն օրերէն մին անցուցինք որ միշտ մեր յիշատակաց մէջ կենդանի պիտի մնայ. Պոլսոյ հայ և եւրոպական մասնաւոր մեծ գովեստիք կը խօսի այս հանդիսին վրայ, և կասեն թէ մեծապէս յաջողեցաւ: Այսօր Պոլսոյ մէջ չը գտնուի հայ մը, օտարական մը որոյ ծանօթ է սիրելի չը լինի Արարատեանի անունը. կը յուսամք թէ ծախքներ եղել վերջ բաւական մեծ դուրս մը գտաւ հասոյթ մնայ ընկերութեան, մօտ 10,000 ռուբլի կասեն: Ընկերութիւնը այս գումարն իւր պատրաստ դրամին վրայ աւելցնելով կարծեմ 25,000 ռուբլու աւելի պատրաստ դրամ կունենայ. նկատելով նաև իւր եկամտից աղբիւրներն և վայելած փառահովութիւնը կը տեսնենք որ այսօր զօրաւոր դիրք մը ունի. առանձին յօդուածով մը կը խօսենք այս նիւթին վրայ. յոյս մեծ ունենք որ Ռուսիոյ հայք ինչպէս մինչև ցայժմ պատահեաւ ևս ամեն կերպով պիտի աջակցեն Պոլսոյցոյ, որով Արարատեան ընկերութեան այն զօրաւոր դիրքն տան զօր օրըստօրէն ձեռք բերելու վրա է:

Սա վայրկեան կիմանամ թէ մեր թերթերու գրածն բոլորովին անհիմն չէ ինքնավարութեան խնդրոց մասին. անա ճիշտ որ իմ քիչ մը վերջ յիշածէս շատ տարբեր չէ: Պատրիարքը Գրան նախարարաց հետ առանձին տեսակցութիւններ ունենալով քիչ շատ հարցուփոխներ է և ջանացեր է համոզել թէ Հայաստանի տեսակ մը ինքնավարութիւն տալու գլխաւոր միջոցներէն մին է. ընդունած պատասխաններէն քաջակերպ, խոսեմ ծրարելու — իւր մէկը կազմակերպութեան գլխաւոր կէտերն (նշեալ որ մեծ դրժ-

գոնութիւն չեն տար թրքաց) և կարնոյ բարեկարգութեանց ծրագիրն: Ծրագիրը պատրաստ է, բայց դեռ Գրան չէ մատուցուել, այս օրերս Ներսէս սրբազան պաշտօնապետ պիտի ներկայացնէ զայր. արդիւնքը չուտով կը հաղորդեմ:

Հայկակ

ԻՍԽԱՆ ԼՈՒՐԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառուի է կամար Տէր-Գալթեանցի РУССКОЕ СЛОВО — նոր դասագիրք Ռուսերէն լեզուի հայ դպրոցների համար, և բոլոր ու պաշտօնական, նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լրացրած: Այս գիրքը հաճութեամբ պ. Թեմական վերատեսչի ընդունված է վրաստանի և խմբակների փնտրելու հայոց բոլոր միջնակարգ և ծխական ուսումնականներում: Սա ընդունված է նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններէ շատերում: Վաճառուի է Թիֆլիսում Վենետիկական և միւս բոլոր գրավաճառանոցներում: Գինն է 45 կոպէկ, ձանապարհի ծախսը առնուելով վրա է: Գումարով առնողներին մեծ զեղուքն կը լինի, եթէ զիմն ուղղակի աշխատասիրողն այս հասցեով. Тифлисъ. Камсару Трп-Давяняцу, въ магазинѣ Бр. Абовьянцъ; на Михайловскомъ мосту.

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10հոկտեմբեր, 5/18 Հոկտեմբերի: «Standard» լրագրին ասում է, որ Բօքսիտ գետնաբեր կարող մոտեցող ժամանակ յայտնեց Բալահիստարի բնակիչներին, որ պատերազմական ամբողջութիւնների համար կառուցված բոլոր շէնքերը պէտք է կործանվեն, բնակիչները պէտք է տուժեն պատերազմի ծանր հարկերը: Կարուն իր շրջակայներով պէտք է ներթափել զինուորական նահանգապետի վերահսկողութեանը: Կարուն շրջագանները պատերազմական դրութեան մէջ կը հրատարակեն: Բնակիչները պարտական են բոլոր զենքերը յանձնել անդիպաններին: Ով մի շաբաթից յետոյ զենք ունենայ վրէժ, պատժի կենթարկվի: Գետնաբեր կոտորածին մասնակցող իւրաքանչիւր մարդուն կարանաւորելու համար 50-ական ռուբլ ընծայ է նշանակված գետնաբեր Բօքսիտին:

ՄԻՍԼԱ, 4/17 Հոկտեմբերի: Լօնդօնի վրայ յով ստացած տեղեկութիւններն նայելով Կիրգիզ—Վիպլէնկեանի և Անդունի պատերազմական գլխաւոր ոյժերը կենտրոնանում են տափարակ դաշտերի վրա, և բոլորովին պատրաստ են յարձակվել Զանշի—Սարուայի վրա գետեղված 4000 չինացիների վրա:

ՎԻԵՆՆԱ, 4/17 Հոկտեմբերի: «Polit. Correspond.» լրագրը հաղորդում է, որ Կ. Պոլսի 5,200,000 լրայի փոխառութեան ծրագիրը չը յաջողվեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 Հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսին առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսին արժէ 224 ռ. 75 կ., երրորդ 221 ռ. արեւելեան առաջին փոխառութեան տոմսին արժէ 90 ռ. 87 1/2 կ., երրորդ 90 ռ., 75 կ., ոսկի 7 ռ. 70 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,62 1/2 պէս., ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 218 մարկ, Փարիզի վրա 275 ֆրանկ: Տրամադրութիւնը խաղաղ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 Հոկտեմբերի: Մօսկվայում Հոկտեմբերի 4-ին վաճառվեցաւ Էրեւանի պատմաբան Սոյոյիսի:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

